



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

14 ՄԱՐՏԻ 2023 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էին՝ Վարդուհի Բարսեղյանը, Անահիտ Հակոբյանը, Արմեն Համբարձումյանը, Անդրանիկ Մկրտչյանը, Արթուր Մուրադյանը, Նորայր Սարգսյանը, Խոսրով Ստեփանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ բնակավայրերի վարչական ղեկավարներ Անդրանիկ Մեջլումյանը, Վարդան Հակոբյանը, Բաղդասար Թովմասյանը, Սևակ Գաբրիելյանը, Արտակ Թովմասյանը, քաղաքաշինության բաժնի պետ Բաբկեն Բեգլարյանը, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի և սոցիալական հարցերի բաժնի պետ Գայանե Արմենակյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Կարեն Հարությունյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Զաքարյանը:

1. Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 14-ի առաջին նստաշրջանի հերթական նիստի օրակարգը.

1) Քասախի <<Արվեստ մշակութային դպրոց-ստուդիա>> ՀՈԱԿ-ի անվանափոխության և նոր անվանումով կանոնադրության հաստատման մասին:

2) Նաիրի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում երկարօրյա խմբեր ձևավորելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին:

3) Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին:

4) Հողամասի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին:

5) Հողամասի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին:

6) Հողամասի սեփականության իրավունքը փոխանակելու մասին:

7) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքն օտարելու մասին:

8) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության իրավունքը վաճառելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին:

- 9) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 10) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 11) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 12) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 13) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 14) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 15) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:
- 16) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
- 17) Նաիրի համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման կարգը և պայմանները հաստատելու մասին:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել Վաղարշակ Ամիրխանյանը, Անահիտ Առաքելյանը, Արման Աբրահամյանը:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

2. Լսեցին
ՔԱՍԱԽԻ <<ԱՐՎԵՍՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ՍՏՈՒԴԻԱ>> ՀՈԱԿ-Ի ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐ ԱՆՎԱՆՈՒՄՈՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 28-րդ կետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Քասախի «Արվեստ մշակութային դպրոց-ստուդիա» ՀՈԱԿ-ի տնօրենի գրությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայություն ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Քասախի «Արվեստ մշակութային դպրոց-ստուդիա» ՀՈԱԿ-ի անվանումը փոխարինել ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի «Քասախի արվեստի դպրոց» ՀՈԱԿ անվանումով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի <<Քասախի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 31-ի «Նաիրի համայնքի արտադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները հաստատելու մասին» N 114-Ա որոշման 3-րդ կետը:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել Վաղարշակ Ամիրխանյանը, Արման Աբրահամյանը:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

3. Լսեցին
ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԵՐԿԱՐՈՐՅԱ ԽՄԲԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետի, «Աշխատանքային օրենսգրքի» 184-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշման հավելվածի 19-րդ կետի 5-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման N 5 հավելվածի 18-րդ կետի 7-րդ ենթակետի, Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Նաիրի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում ձևավորել երկարօրյա խմբեր:

2. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երկարօրյա խմբերի դաստիարակի վարձատրությունը իրականացնել ՀՈԱԿ-ի աշխատավարձի ֆոնդից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

4.Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 1851-Ն որոշման՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Նաիրի համայնքի Պոռոշյան գյուղում գտնվող ջրագիծը (d=160, L=742,8, d=160, L=967.4, d=90, L=464.5, d=90, L=202.34, d=90, L=788.5, d=90, L=309.2, d=90, L=1093.5, d=90, L=421.7, (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07112022-07-0133) սեփականության իրավունքով անհատույց նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի:

2. Ուժը կորցրած ճանաչել Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման

իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին»>> N 264-Ա որոշումը:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

5.Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի N Կ-14102021-07-0126 որոշումը՝ **Նաիրի համայնքի ավագանին որոշում է.**

Տալ համաձայնություն Քասախ գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 07-065-0035-0067 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ 2005 թվականի օգոստոսի 20-ին Լենա Հրանտի Մկրտչյանի հետ կնքած պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություն և պայմանագրի 1.1 կետում «515.0 քմ >> հողամասի չափը փոխարինել «397.0 քմ» հողամասի չափով:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

6.Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի N 1340-Ն որոշումը, քաղաքացի Վաղարշակ Ղարիբյանի 2023 թվականի փետրվարի 22-ի դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն և Ջովունի գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 07-029-0273-0022 կադաստրային ծածկագրի 0.1 հա մակերեսով հողամասի նկատմամբ 2003 թվականի օգոստոսի 28-ին Վաղարշակ Վլադիմիրի Ղարիբյանի հետ կնքած պայմանագրում կատարել համապատասխան փոփոխություն, պայմանագրի 1.3 կետում «արտադրական նշանակության» բառերը փոխարինել «բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման» բառերով:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60-Ա/

7.Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 30-րդ կետի, հիմք ընդունելով Նաիրի համայնքի ղեկավարին Սարգիս Տիգրանի Առաքելյանի լիազորված անձ Սևակ Վոամի Միքայելյանի կողմից ներկայացված դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է..

1. Թույլատրել Նաիրի համայնք, քաղաք Եղվարդ, Արտադրական հանգույց թաղամաս, թիվ 31/5 հասցեում գտնվող Սարգիս Տիգրանի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 07-004-0615-0013 կադաստրային ծածկագրի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27092022-07-0093) 0.0623 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասը փոխանակել համայնքին սեփականություն հանդիսացող 07-004-0615-0014 կադաստրային ծածկագրի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների համարժեք հողամասի հետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա/

8.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի, հիմք ընդունելով Նաիրի համայնքի ղեկավարին Ղազար Սահակի Ղազարյանի կողմից ներկայացված դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

Նաիրի համայնքի Քասախ գյուղի վարչական տարածքում գտնվող, սեփականության իրավունքով Ղազար Սահակի Ղազարյանին պատկանող 07-065-0095-0053 կադաստրային ծածկագրի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին կից, համայնքային սեփականություն հանդիսացող 07-065-0095-0056 կադաստրային ծածկագրի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N

13022023-07-0120) 0,00543 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով օտարել Ղազար Սահակի Ղազարյանին 570900 դրամով:

Կողմ-19 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ա/

9.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ **Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝**

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Եղվարդ քաղաքում գտնվող, Անդրանիկ Սահակի Ղարիբյանին վարձակալության իրավունքով տրամադրված 07-004-0226-0041 կադաստրային ծածկագրի 0,002 հա բնակավայրերի նշանակության խառը կառուցապատման հողամասի վարձակալության իրավունքը վաճառելու վերաբերյալ:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ա/

10.Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14³ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-1 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Եղվարդ քաղաքում գտնվող, սեփականության իրավունքով Պարույր Թադևոսի Պալյանին պատկանող 07-004-0585-0011 և 07-004-0585-0012 կադաստրային ծածկագրերի 0.0496 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերի կատեգորիա:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի N 978-Ն որոշմամբ հաստատված Եղվարդ քաղաքի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

3. Ուժը կորցրած ճանաչել Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 18-ի <<Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին>> N 20-Ա որոշումը:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

11. Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14³ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-45 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Ջովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Երվանդ Յուրիկի Թարվերոյանին պատկանող 07-029-0263-0024 կադաստրային ծածկագրի 0.25 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43 որոշմամբ հաստատված Ջովունի բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

12. Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14³ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-29 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Քասախ գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Վահագն Ռոբերտի Մելքոնյանին պատկանող 07-065-0293-0048 կադաստրային ծածկագրի 0.3756 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 15-ի N 9 որոշմամբ հաստատված Քասախ բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

13.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14³ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-37 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Պոռոշյան գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Էդգար Հայրապետյանին և Աննա Դալարյանին պատկանող 07-053-0377-0081 կադաստրային ծածկագրի 0.04257 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պոռոշյան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 42-Ն որոշմամբ հաստատված Պոռոշյան բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

14.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-49 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Պողոսյան գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Տիգրան Հովհաննեսի Քալաշյանին պատկանող 07-053-0383-0033 կադաստրային ծածկագրի 0.0661 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պողոսյան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 42-Ն որոշմամբ հաստատված Պողոսյան բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

16.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-53 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Ջովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Սուրեն Բարսեղի Բարսեղյանին պատկանող 07-029-0257-0062 կադաստրային ծածկագրի 0.05 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43 որոշմամբ հաստատված Ջովունի բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

15.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14³ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-48 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Ջովունի գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Անդրանիկ Արթուրի Եղիազարյանին պատկանող 07-029-0258-0044 կադաստրային ծածկագրի 0.06 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43 որոշմամբ հաստատված Ջովունի բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

16.Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, հիմք ընդունելով Սեյրան Մեսրոպյանի կողմից ներկայացված դիմումը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Նաիրի համայնք, Եղվարդ քաղաքում գտնվող, սեփականության իրավունքով Սեյրան, Հայկ Մեսրոպյաններին և Անգին Մկրտչյանին պատկանող 07-004-0479-0003 կադաստրային ծածկագրի 0.5055 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ անասնագոմ կառուցելու նպատակով:

2. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

17. Լսեցին

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԽՈՇՈՐ ԵԶՐԱԶԱՓԻ ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՓՈՒԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է .

Հաստատել Նաիրի համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման կարգը և պայմանները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԱՆ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ 

ԱՇՈՏ ԱԶԻԶՅԱՆ 

ՎԱՂԱՐՇԱԿ ԱՄԻՐԻՍԱՆՅԱՆ 

ՆԱՐԵԿ ԱՆՏՈՆՅԱՆ

[Signature]

ԱՆԱՀԻՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

[Signature]

ԼԵՆԴՐՈՒՇ ԱՐՇԱԿՅԱՆ

[Signature]

ԱՆՆՄԱՆ ԲԱԲԱՅԱՆ

[Signature]

ՌԱՖԻԿ ԶՈՂՐԱԲՅԱՆ

[Signature]

ԽԱԶԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

[Signature]

ԱՐՄԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

[Signature]

ԳՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

[Signature]

ԼԻԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

[Signature]

ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

[Signature]

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

[Signature]

ԳԵՎՈՐԳ ՄՈՒՐԱԴՅԱՆ

[Signature]

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

[Signature]

ԱՆԱՀԻՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

[Signature]

ՊԵՏՐՈՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

[Signature]

ՍՈՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

[Signature]

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

[Signature]



Նիստին արձանագրոց՝ Հասմիկ Զաքարյանը

[Signature]

Հավելված

Նախրի համայնքի ավագանու
2023 թվականի մարտի 13-ի N 72-Ա որոշման



Կ Ա Ր Գ

« ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԽՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԽՈՇՈՐ ԵԶՐԱԶՓԻ ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Նախրի համայնքում աղբի հավաքման և փոխադրման թույլտվություն տալու կարգը:
2. Թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի կողմից:
3. Թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը /այսուհետ՝ հայտատու/ համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ:
4. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:
5. Թույլտվություն տալու հետ միաժամանակ, ավագանու կողմից համայնքի տարածքում սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հայտատուից գանձվում է տեղական տուրք:
6. Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո 3 օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում հաստատված թույլտվությունը:
7. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատույի ներկայացրած փաստաթղթերը թերի են, չեն համապատասխանում ավագանու կողմից հաստատված պայմաններին: Թույլտվություն ստանալու մասին հայտը գրավոր մերժվում է հայտի մուտքագրման օրվանից երկու օրվա ընթացքում: Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժելու դեպքում պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:
8. Թույլտվությունը չի կարող հայտատուի կողմից փոխանցվել այլ անձի կամ օգտագործել այլ անձի կողմից: